22 օգոստոսի 2019 թվականի N 1070 - Ն

ԱՐՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

որոշում է.

1. Հաստատել արյան բաղադրամասերի պետական պաշարների ստեղծման, պահպանման և նորացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 27
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
օգոստոսի 22-ի N 1070 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են արյան բաղադրամասերի պետական պաշարների ստեղծման, պահպանման և նորացման հետ կապված հարաբերությունները:

2. Արյան բաղադրամասերի պետական պաշարներն ստեղծվում, պահպանվում և նորացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան տեսակների գործունեության լիցենզիա ունեցող՝ արյան դոնորություն և փոխներարկումային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն)՝ բնակչության առողջության պահպանման ու բարելավման ծրագրերի շրջանակներում պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող բժշկական օգնության ու սպասարկման նպատակով կնքված պայմանագրերի հիման վրա:

3. Արյան բաղադրամասերի պետական պաշարներն ստեղծվում են նաև ռազմական դրության և արտակարգ իրավիճակների պայմաններում փոխներարկումային բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման նպատակով:

4. Արյան բաղադրամասերի պետական պաշարների ստեղծման, պահպանման ու նորացման համար պատասխանատու է բժշկական կազմակերպության ղեկավարը և նրա կողմից նշանակված պատասխանատու անձը:

5. Արյան բաղադրամասերի պետական պաշարների ստեղծման նպատակով բժշկական կազմակերպությունը «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխ-

ներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դոնորության կամավոր գործունեության սկզբունքի համաձայն հավաքագրում է արյան դոնորների և ստեղծում արյան դոնորների ցանկ՝ համաձայն N 1 ձևի:

6. Արյան դոնորների ցանկը տարեկան երկու անգամ ճշգրտվում և թարմացվում է սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված պատասխանատու անձի կողմից:

7. Արյան պետական պաշարների մեջ ներառվում են՝

1) փոխներարկման համար պիտանի արյան բաղադրամասեր (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի օգոստոսի 7-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված արյան պարտադիր հետազոտությունների ցանկին, իրականացման կարգին ու մեթոդներին համապատասխան հետազոտված արյան բաղադրամասեր): Ընդ որում, արյան բաղադրամասերի մշտապես պահպանվող և թարմացվող նվազագույն ծավալը սահմանվում է՝

ա. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար (այսուհետ՝ արյունաբանական կենտրոն) առնվազն 100 պարկ արյան բաղադրամասեր՝ հետևյալ համամասնությամբ.

O(I) 28 պարկ (28 %)		A(II) 50 պարկ (50 %)		B(III) 14 պարկ (14 %)		AB(IV) 8 պարկ (8 %)	
O(I)Rh+ 24 պարկ (87 %)	O(I)rh= 4 պարկ (13 %)	A(II) Rh+ 43 պարկ (87 %)	A(II) rh= 7 պարկ (13 %)	B(III) Rh+ 12 պարկ (87 %)	B(III) rh= 2 պարկ (13 %)	AB(IV) Rh+ 7 պարկ (87 %)	AB(IV) rh= 1 պարկ (13 %)

բ. սույն հավելվածի 2-րդ կետում նշված պահանջին համապատասխանող յուրաքանչյուր բժշկական կազմակերպության (բացառությամբ արյունաբանական կենտրոնի) համար առնվազն 25 պարկ արյան բաղադրամասեր՝ հետևյալ համամասնությամբ.

O(I) 7 պարկ (28 %)		A(II) 12 պարկ (50 %)		B(III) 4 պարկ (14 %)		AB(IV) 2 պարկ (8 %)	
O(I) Rh+ 6 պարկ (87 %)	O(I) rh= 1 պարկ (13 %)	A(II) Rh+ 10 պարկ (87 %)	A(II) rh= 2 պարկ (13 %)	B(III) Rh+ 3 պարկ (87 %)	B(III) rh= 1 պարկ (13 %)	AB(IV) Rh+ 2 պարկ (87 %)	AB(IV) rh= 0 պարկ (13 %)

Ընդ որում, էրիթրոցիտային զանգվածի և թարմ սառեցված պլազմայի փոխհարաբերությունը պետք է լինի 1:1-ի.

2) արյան հավաքման համար պարկեր.

3) սառնարանային ցենտրիֆուգաներ.

4) կշեռք-ճոճանակներ.

5) արյան հավաքման պարկերի զոդիչներ.

6) թեստ-համակարգեր, ազդանյութեր և անհրաժեշտ պարագաներ՝ արյան փորձանմուշների հետազոտման համար.

7) փոխներարկման համակարգեր.

8) ծախսանյութեր (քլորհեքսիդինի սպիրտային լուծույթ, սկարիֆիկատոր, սպիրտային անձեռոցիկ, բժշկական սպեղանի, էթիլ սպիրտ, վիրակապ, բամբակ, ֆիզիոլոգիական լուծույթ) և վիրաբուժական գործիքներ).

9) արյան բաղադրամասերի պահպանման համար նախատեսված հատուկ սառնարաններ և սառցարաններ.

10) արյան և արյան բաղադրամասերի տեղափոխման համար հատուկ արկղեր (կոնտեյներներ)՝ սառցային շղթան ապահովելու համար և փոխադրամիջոցի համար նախատեսված սառնարաններ (12V).

11) արյան և արյան բաղադրամասերի տեղափոխման համար համապատասխան ձայնային ու լուսային ազդանշաններով փոխադրամիջոցներ.

12) ռազմական դրության և արտակարգ իրավիճակների պայմաններում արյան հավաքման և արյան բաղադրամասերի ստացման գործընթացն անխափան կազմակերպելու համար ինքնուրույն էլեկտրամատակարարման սարքեր:

8. Սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված պահանջին համապատասխանող բժշկական կազմակերպությունները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ կնքված բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրերը, յուրաքանչյուր ամիս էլեկտրոնային փոստի միջոցով արյունաբանական կենտրոն են ներկայացնում հաշվետվություն սույն հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված արյան բաղադրամասերի քանակների առկայության վերաբերյալ՝ համաձայն N 2 ձևի:

9. Սույն հավելվածի 8-րդ կետով սահմանված հաշվետվություններն ամփոփելուց հետո արյունաբանական կենտրոնը եռամսյակային հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ կնքված բնակչության առողջության պահպանման ու բարելավման ծրագրերի շրջանակներում պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագիրը:

10. Արյան բաղադրամասերը պահպանվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հունվարի 25-ի N 03-Ն հրամանով հաստատված արյան կամ դրա բաղադրամասերի որակական հատկանիշների ապահովման նպատակով հատուկ ջերմային և անվտանգության պայմաններում պահպանման կարգի համաձայն՝ հատուկ սառցարաններում և սառնարաններում, ընդ որում, էրիթրոցիտային

զանգվածի պահպանման ժամկետը կախված է արյան հավաքման պարկում առկա կոնսերվանտից:

11. Արյան բաղադրամասերի պետական պաշարները մշտապես նորացվում են հետևյալ ժամկետներում՝ պահպանելով դրանց չնվազող քանակները՝

1) էրիթրոցիտային զանգված՝ պիտանիության ժամկետի 3/4-ը լրանալուց հետո.

2) թարմ սառեցված պլազմա՝ պիտանիության ժամկետի 3/5-ը լրանալուց հետո.

3) արյան հավաքման, հետազոտման և փոխներարկման համար նախատեսված թեստ-համակարգերը, ազդանյութերը և ծախսանյութերը՝ պիտանիության ժամկետի 2/3-ը լրանալուց հետո:

12. Սույն հավելվածի 11-րդ կետով սահմանված արյան բաղադրամասերի, թեստ-համակարգերի, ազդանյութերի և ծախսանյութերի պիտանիության ժամկետները լրանալուց հետո պետական պաշարներն անցնում են բժշկական կազմակերպության տնօրինության տակ: Ընդ որում, պետական պաշարների ստեղծման, պահպանման և նորացման գործընթացի ընթացքում արյան և դրա բաղադրամասերի պիտանիության ժամկետները լրանալու հետ կապված ծախսերի համար պատասխանատու է բժշկական կազմակերպությունը:

13. Սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված պատասխանատու անձը պարտավոր է վերահսկել արյան պետական պաշարի՝ սույն հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ծավալի մշտական առկայությունը բժշկական կազմակերպությունում և պատասխանատու է հաշվետվությունները ներկայացնելու համար՝ սույն հավելվածի 8-րդ և 9-րդ կետերին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Ձև N 1

Ց Ա Ն Կ

ԱՐՅԱՆ ԴՈՆՈՐՆԵՐԻ

NN ը/կ	Դոնորի անունը, ազգանունը, հայրանունը	Արյան խումբը և ռեզուս գործոնը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Անձնագրի սերիան և համարը	Բնակության վայրը և հեռախոսա-համարը	Աշխատանքի վայրը և հեռախոսա-համարը	Էլեկտրո-նային փոստը

Ձև N 2

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱՐՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ՊԱՀԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բժշկական կազմակերպության անվանումը_____

_____ _____ 20___թ. դրությամբ առկա են՝

NN ը/կ	Արյան բաղադրամասի անվանումը	O(I)Rh+	A(II)Rh+	B(III)Rh+	AB(IV)Rh+	O(I)rh=	A(II) rh=	B(III) rh=	AB(IV)rh=
1.	Էրիթրոցիտային զանգված								
2.	Թարմ սառեցված պլազմա								

Բժշկական կազմակերպության տնօրեն _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)